



2018 թվականի նոյեմբերի 22-ին Վիրահայոց թեմի Սանցխե-Ջավախքի և Ծալկայի ընդհանուր առաջնորդական փոխանորդության Ախալքալաքի Տեր Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունի կենտրոնի դահլիճում, նախագահությամբ Վիրահայոց թեմի բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տեր Կազգեն եպիսկոպոս Միրզախանյանի, տեղի ունեցավ տարածաշրջանի քահանայից ժողով: Ժողովի ընթացքում նախ քննարկվեցին փոխառաջնորդության ընթացիկ հարցերը, ապա ծխական թեմական կանոնադրությունը ու դրա կիրառումը համայնքներում:



Առաջնորդի կողմից տրվեց հանձնարարական, որ հոգևոր համայնքները դառնան ինքնավար ու ինքնաբավ՝ հիմնված կանոնադրության սկզբունքների վրա:



Ժողովի վերջում քահանա հայրերն ու սարկավագները հարցեր ուղղեցին Առաջնորդին և ստացան սպառիչ պատասխաններ:

Ժողովից հետո Գերաշնորհ Սրբազան Հայրը հոգևոր դասի ներկայացուցիչների հետ միասին մասնակցեց Վրաց Ուղղափառ Ամենայն Սրբոց եկեղեցու հիմնարկեթի արարողությանը, որին ներկա էին Սանցխե-Ջավախքի նահանգապետը, պատգամավորներ, պետական այրեր, ինչպես նաև վրաց եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ:

